Ք.Երևան 08.04.2025թ.

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Բաբկեն Եկմալյանի կողմից, հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի, Արմինե Մովսիսյանի և Արմենակ Ադամյանի, քննարկելով ըստ Սեդա Ծառուկյանի /այսուհետ՝ դիմումատու/ Բաբկեն Եկմալյանի նկատմամբ ներկայացված դիմումը, որը հասցեագրված է «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին, պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի «3»-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչ՝ Բաբկեն Եկմալյանի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Բաբկեն Եկմալյանի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, ս.թ. փետրվարի 14-ին նշանակվել է կարգապահական հանձնաժողովի նիստ, որին ներկայացել էին հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը, Արմինե Մովսիսյանը և Արմենակ Ադամյանը:

Հրավիրված նիստին ներկայացել էին նաև դիմումատու՝ Սեդա Ծառուկյանը /այսուհետ դիմումատու/ և սնանկության գործով կառավարիչ՝ Բաբկեն Եկմալյանը /այսուհետ՝ կառավարիչ/: Հանձնաժողովի նիստը բացեց հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նիստին ներկա է գտնվել թվով չորս անդամներ, ուստի կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով, Ա.Սարգսյանը հայտնեց, որ նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը: Նախ՝ Ա.Սարգսյանը զգուշացրեց նիստի մասնակիցներին , որ նիստը ձայնագրվում է:

Ա.Սարգսյանը առաջարկեց սահմանել դիմումի քննարկման համար տրվող հարցերի կամ հայտարարությունների հերթականությունը, որով առաջարկեց նախ լսել դիմումատուին, հարցերի դեպքում այն ուղղել դիմումատուին, այնուհետև ձայն տալ կառավարչին, հարցերի դեպքում այն ուղղել կառավարիչին և հանձնաժողովի անդամների կարծիքների միջոցով, կայացնել որոշում կարգապահական տույժ կիրառելու կամ այն կարճելու վերաբերյալ: Նշված առաջարկությունը ընդունվեց միաձայն:

Դիմումատուն իր դիմումում նշել է, որ թիվ ՍՆԴ/1263/04/24 սնանկության գործով նախագահությամբ դատավոր՝ Ա. Ջավախյանի/ հանդիսանում է պահանջատեր:

Իր կողմից իրականացված գործողությունների արդյունքում պարզել է, որ պարտապան, թիվ ՍՆԴ/1263/04 24 սնանկության գործով սնանկ ճանաչված Ելենա Զորկինի Սարգսյանը իր անվամբ 20.08.2014թ-ին թիվ 09072020-01-0290 սեփականության վկայականով հանդիսանում է, որպես միանձնյա սեփականության իրավունքով գրանցված ք. Երեւան, Նոր Նորքի 7-րդ միկրոշրջան 49 շենք, 15 բնակարանի հասցեի նկատմամբ, որը 19.06.2023թ-ի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով օտարել է Գագիկ Սերոժի Բուլղադարյանի անվամբ, այդ կերպ նպատակ հետապնդելով խուսափել նույն հասցեի բնակարանի վերաբերյալ, 25.04.2023թ-ի ստացական վերնագրով որպես նախավճար Ս. Ծառուկյանից ստացած 2.334.000 ՀՀ դրամը դիտավորությամբ

վերադարձնելուց: Ըստ դիմումատուի կեղծ 01.01.2022թ-ի ստացականի հիմքով, Աննա Հակոբի Պետրոսյանի կողմից թիվ ՍՆԴ/1263/04/24 սնանկության գործով, դիմել է դատարան Ելենա Զորկինի Սարգսյանին սնանկ ճանաչելու համար, որը դատարանի 31.05.2024թ-ի վճռով բավարարվել է: Դիմումատուն իր դիմումում նշել է, որ հաշվի առնելով վերոնշված փաստական հանգամանքերը եւ այն, որ սնանկության կառավարիչ Բաբկեն Եկմալյանը վերջնական ցուցակը՝ հաստատելուց հետո մինչ օրս չի դիմել դատարան 19.06.2023թ-ին Ելենա Զորկինի Սարգսյանի եւ Գագիկ Սերոժի Բուլղադարյանի միջեւ կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջով, իսկ օրենքով սահմանված կարգով վերջնական ցուցակը հաստատվելուց 6 ամիս անց այլեւս կառավարիչը չի կարող դիմել դատարան վերը նշված գործարքը անվավեր ճանաչելու պահանջով: Դիմումատուն նշել է նաև, որ ընդ որում 28.08.2024թ-ին հաստատվել է պահանջների վերջին ցուցակը եւ պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը եւ վայրը նշանակելու մասին եւ դիմումատուն այդ մասով ունի հիմնավոր կասկածներ, որ մարդկային գործոնի ազդեցություն է առկա սույն սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալյանի վրա, որից ելնելով էլ վերջինս ժամանակ ձգելով, մինչեւ լրանա 6 ամիսը մինչ օրս չի դիմել դատարան վերը նշված նվիրատվության պայմանագիրը անվավեր ճանաչելու համար: Դիմումատուն նշել է, որ նաեւ վերը թվարկված փաստերը կոռուպցիոն ռիսկեր են պարունակում բոլոր փոխկապակցված անձանց միջեւ, որոնք հանցավոր համաձայնության գալով անի ամեն ինչ, որ 25.04.2023թ-ի ստացական վերնագրով, որպես նախավճար Ս. Ծառուկյանից ստացած 2.334.000 ՀՀ դրամը դիտավորությամբ չվերադարձնեն, դատարանին խնդել է պարզել կառավարչի դիրքորոշումը՝ 19.06.2023թ-ին Ելենա Զորկինի Սարգսյանի եւ Գագիկ Սերոժի Բուլղադարյանի միջեւ կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու մասով, որը էական նշանակություն ունի պարտատիրոջ համար, քանի որ կառավարչի դիրքորոշումը պարզելուց հետո դիմումատուն, որը հանդիսանում է որպես պարտատեր, դիմելու է այլ համապատասխան մարմիններ, կեղծիքները, խարդախությունները եւ փոխկապակցված անձանց կողմից նախնական համաձայնության գալու միջոցով՝ դիտավորությամբ կատարված եւ կատարվող գործողություններին համապատասխան գնահատական տալու համար: Նշել է նաև, որ Ելենա Սարգսյանը ունենալով մի քանի երեխաներ, նշված հասցեի գույքը կեղծ նվիրատվության պայմանագրի հիմքով օտարել է այլ անձի, ուղղակի գույքի անվանափոխություն կատարելու եւ այլ հեռահար եւ խարդախ նպատակները իրականացնելու համար:

Իր դիմումով դիմումատուն նշել է, որ սնանկ ճանաչված Ելենա Սարգսյանի անունից, բայց նրա անվան տակ բոլոր գործողությունները կատարվել եւ կատարվում է անմիջապես նրա որդու Գեւորգ Բաբկենի Սարգսյանի կողմից: Տեղեկացրել է նաեւ, որ 06.11.2024թ-ին դիմում է ուղարկել կառավարչին խնդրելով գրավոր տրամադրել տեղեկատվություն, թե ինչու մինչեւ դիմումը ներկայացնելու օրը, Ելենա Սարգսյանի կողմից վերը նշված նվիրատվության պայմանագրի հիման վրա օտարված գործարքին չի անդրադարձել, եւ ինչ իրավական եւ փաստական հիմնավորումներով, որին ի պատասխան 15.11.2024թ-ի թիվ 17 գրությամբ ստացել է պատասխան, այն մասին, որ «Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 կետի հիմքով հրավիրվել է պարտատերերի ժողով, ժողովին մասնակցել է պարտատերերի առաջին ժողովին մասնակցած 100 տոկոս ձայնի իրավունք ունեցող պարտատեր Աննա Պետրոսյանը, ըստ նշված պատասխան գրության ժողովի որոշմամբ պարտատերը կողմ է քվեարկել բարձրացված հարցի մասով, այն է ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի հիմքով դատարան դիմելուց ձեռնպահ մնալու մասին որոշում է կայացրել պարտատերերի ժողովը: Հաշվի առնելով վերը նշված անվիճելի փաստական հանգամանքները, դիմումատուն խնդրում է անդրադառնալ բարձրացված հարցերին,

քանի որ մինչ օրս Բաբկեն Եկմալյանը վերջնական ցուցակը հաստատելուց հետո չի դիմել դատարան 19.06.2023թ-ին Ելենա Զորկինի Սարգսյանի Գագիկ Սերոժի Բուլղադարյանի միջև կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջով:

Դիմումատուն խնդրել է նաև, որ համապատասխան վարույթ հարուցել թիվ ՍՆԴ/1263/04/24 սնանկության գործով սնանկ ճանաչված Ելենա Զորկինի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալյանի նկատմամբ, պարզել կառավարչի կողմից դրսևորած անգործությունը, պատճառները և տալ համապատասխան գնահատական կառավարիչի կողմից ցուցաբերած անգործությանը: Նշելով նաև, որ դատարանի 28.08.2024թ-ի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը, իսկ օրենքով սահմանված կարգով վերջնական ցուցակը հաստատվելուց 6 ամիս անց հետո, այլևս կառավարիչը չի կարող դիմել դատարան վերը նշված գործարքը անվավեր ճանաչելու պահանջով, իսկ կառավարչի կողմից հայց ներկայացնելու ժամկետը լրանում է 2025թ-ի փետրվարի 28-ին:

Հրավիրված նիստի ընթացքում, դիմումատուն ըստ էության պնդեց իր դիմումը ավելացնելով նաև, որ ըստ իրեն կառավարիչը դրսևորում է անգործություն և ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի հիմքով, նվիրատվության պայմանագրի անվավերության հայցադիմում չի ներկայացնում դատարան: Դիմումատուն նշել է նաև, որ ըստ իրեն սույն սնանկության գործը կեղծ սնանկության գործ է, սնանկ ճանաչելու պահանջով դիմումատուի և պարտապանի միջև կազմված է կեղծ ստացական և նա ձեռնարկելու է ցանկացած գործողություններ նշված հանգամանքը ի հայտ բերելու նպատակով: Դիմումատուն, որը ինչպես արդեն նշեցի հանդիսանում է սույն գործով որպես պարտատեր, հանձնաժողովին ներկայացրեց նաև իր կողմից պարտապանին տրված գումարի մանրամասնությունները, թե ինչ դժվարությամբ է այդ գումարը հայտհայթել և տվել պարտապանին և հայտնեց, որ չի պատրաստվում կառավարիչի անգործության պատճառով այդ գումարը կորցնել: Այնուհետև դիմումատուն նշեց, որ պարտապանը իրեն խաբել է, քցել է թյուրիմաճության մեջ և սույն գործով վիճարկվող բնակարանը, նախկինում հենց դիմումատուի օգնությամբ պետք է վաճառվեր, սակայն պարտապանը խաբել է իրեն և վաճառել է մեկ այլ անձի, իսկ այնուհետև կեղծ միջոցներով գնացել սնանկության: Դիմումատուն հայտնեց այն համոզմունքը, որ սնանկության վարույթ հարուցող դիմումատու՝ պարտատերը, գումար չի ունեցել, ապրել է շատ վատ վիճակում և գումար բնականաբար չէր կարող տալ պարտապանի և այդ իսկ պատճառով էլ կրկնեց, որ սնանկությունը կեղծ է: Դիմումատուն իր բանավոր հայտարարությամբ հայտնեց նաև, որ կառավարիչի կողմից իրեն է ուղարկվել պատասխան գրություն, որով կառավարիչը հայտնել է այն մասին, որ հրավիրված պարտատերերի ժողովին, քննարկվել է ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 կետի հիմքով ձեռնպահ մնալու /գույքի նախորդ 5 տարիների ընթացքում նվիրատվության գործարքը անվավեր ճանաչելու հայցի վերաբերյալ/ հարցը, որին 100% ձայնի իրավունք ունեցող պարտատեր Աննա Պետրոսյանը քվեարկել է կողմ: Ըստ դիմումատուի չի կարող ստացվել այնպես, որ սնանկ ճանաչելու դիմում ներկայացնող անձը դիմում ներկայացնի դատարանին, պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով, իսկ հետագայում կողմ քվեարկել կառավարիչին ձեռնպահ մնալու սնանկության վարույթում որևիցե մի գործողությունների կատարման մասով, որը կարող է այդ պարտատիրոջը գումար բերել: Դիմումատուն նշեց նաև, որ ավելորդ չի համարում նշել նաև, որ հանդիպել է կառավարիչին և այն հարցին, թե ինչու կառավարիչը չի մտնում գույքի նվիրատվությունը անվավեր ճանաչելու հայցով, կառավարիչը պատասխանել է, թե ինքը իրավաբան չէ, նա տնտեսագետ է, և իրավաբանի վարձելու նպատակով պետք է կատարվեն բազմաթիվ ծախսեր: Դիմումատուն հայտարարց նաև, որ եթե կառավարիչը գտնում է, որ կան ծախսեր որոնք վերջինս գտնում է, որ կարող են կատարվել կամ առաջանալ, ապա դիմումատուն

առաջարկեց, որպեսզի կառավարիչը լիազորի իրեն որպես նաև փաստաբանի, որպես նշված քաղ հայցի շրջանակներում, կառավարիչի լիազորված անձը հանդիսանալու առումով:
Ա.Սարգսյանը դիմումատուից հետաքրքրվեց, թե իր կողմից պարտապանին կատարված վճարումները, ամբողջությամբ ընգրկվել են արդյոք պարտատերերի վերջնական ցուցակի մեջ և արդյոք այդ պահանջը հաստատվել է, որպես վարջնական պահանջ, որին ի պատասխան դիմումատուն հայտնեց, որ իր պահանջը ամբողջությամբ հաստատված է դատարանի՝ պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման մեջ:
Ա.Սարգսյանը դիմումատուին տրված հարցով հայտնեց, որ իր իսկ կողմից նիստի ընթացքում բանավոր կերպով նշվել է, որ այն կեղծիքների մասով, որոնք կապված են կեղծ սնանկության, կեղծ ստացականի և կատարված այլ նման կեղծ գործողությունների հետ, դիմումատուն ընթացք կտա միայն, սույն կարգապահական վարույթի ավարտից հետո: Ա.Սարգսյանը ավելացնելով, որ իրավագիտության մեջ հստակեցված է այն փաստը, եթե կատարվել են կեղծիքներ, այսինքն հանցագործություն, ապա նա մինչ օրս պետք է հայտներ համապատասխան մարմիններին, նշվածի վերաբերյալ, ինչն է պատճառը, որ մինչ օրս նման գործողություններ չեն կատարվել, որին դիմումատու Սեդա Ծառուկյանը հայտնեց, որ նա սպասում է Բաբկեն Եկմալյանի կողմից կատարվելիք աշխատանքներին, որ միգուցե կառավարիչը վերջին ժամկետներում կատարի իր պարտականությունները կապված տան նվիրատվությունը անվավեր ճանաչելու պահանջի հետ:
Ա.Սարգսյանը հարցրեց նաև, որ եթե կա քրեորեն հետապնդելի արարք, ապա արարքը ինչ կապ ունի Բաբկեն Եկմալյանի գործողությունների հետ, որին ի պատասխան դիմումատուն հայտնեց, որ խոսքը դրա մասին չէ և ինքը, թե սնանկության գործով կառավարիչի, և թե այլ անձի դեմ որևիցե մի տրամադրվածություն չունի և նրան ուղղակի անհրաժեշտ է, որ կառավարիչը կատարի իր օրենքով սահմանված գործողությունները, որպեսզի նա ստանա իր գումարները:
Ա.Սարգսյանը հետաքրքրվեց նաև, թե 15.11.2024թ.-ից /պատասխան գրության ստացման պահից/, դիմումատուն իմացել է այն մասին, որ կառավարիչը որևիցե մի գործողություն կատարված գույքի նվիրատվության գործարքի անվավերության հետ չի կատարելու: Ավելացնելով իր հարցը Ա.Սարգսյանը հայտնեց, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը նախատեսում է, որ դիմումատուն կարող էր ներկայացնել նմանատիպ դիմում դատարանին, իմանալու օրվանից 10-օրյա ժամկետում, այսինք հաշվարկված 10-օրյա ժամկետը 15.11.2024թ.-ից, դատարան դիմում ներկայացրել եք կառավարիչի անգործության վերաբերյալ թե ոչ: Որին ի պատասխան դիմումատուն հայտնեց, որ ինքը նեղ սնանկության գործով մասնագետ չէ և իրեն հայտնի չէր օրենքի 10-օրյա ժամկետի սահմանված լինելու մասին:
Ներկայացված դիմումին իր դիրքորոշում՝ պատասխաններ ներկայացրել կառավարիչը, որը մասնավորապես նշել է, որ ՀՀ Սնանկության դատարանի 31.05.2024 թվականի վճռով Ելենա Զորիկի Սարգսյանը ճանաչվել է սնանկ եւ նույն դատարանի 10.06.2024 թվականի որոշմամբ վերջինս նշանակ է սնանկության գործով կառավարիչ, իսկ ՀՀ Սնանկության դատարանի 28.08.2024 թվականի որոշմամբ հաստատվել է պարտատերերի վերջնական ցուցակը հետեւյալ առաջնահերթությամբ՝
1.Դատական ծախս/ Աննա Պետրոսյան /՝ 200.000 ՀՀ դրամ -Դ/հերթ,
2.Աննա Հակոբի Պետրոսյան՝ 7.000.000 ՀՀ դրամ - Է/հերթ,
3.Սեդա Երջանիկի Ծառուկյան՝ 2.472.000 ՀՀ դրամ – Է/հերթ,
4.Արարատ Վարդանյան՝ 105.000 ՀՀ դրամ – Է/հերթ:
Կառավարիչը իր դիմումով հայտնել է, որ նույն որոշմամբ սահմանվել է պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը, որը կայացել է 2024 թվականի հոկտեմբերի 04-ին, ժամը՝ 16:00-ին:

Ըստ կառավարիչի կողմից տրված դիրքորոշման, պարտատերերի առաջին ժողովին մասնակցել է միայն Աննա Պետրոսյանը, ձեռք բերելով 100% ձայնի իրավունք: Հայտնել է, որ պարտատերերի առաջին ժողովին պարտատեր Սեդա Ծառուկյանը չի մասնակցել: Այնուհետեւ 08.11.2024 թվականին հրավիրվել է պարտատերերի ժողով: Ժողովի օրակարգում եղել է հետեւյալ հարցը. Հարց 1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 կետի հիմքով դատարան դիմելուց ձեռնպահ մնալու մասին: Իր դիրքորոշմամբ կառավարիչը հայտնել է, որ նշված ժողովին մասնակցել է բացառապես 100% ձայնի իրավունք ունեցող պարտատեր Աննա Պետրոսյանը /այսինքն մասնակցել է միայն պարտատեր՝ Աննա Պետրոսյանը/: Ժողովի ընթացքում կառավարիչը պարզաբանել է ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 կետի կարգավորումը, բացատրել է առանձնահատկությունները եւ հետեւանքները: Կառավարիչը իր դիրքորոշմամբ հայտնել է նաև, որ պարտատեր Աննա Պետրոսյանը դատարան դիմելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ հայտնել է իր կողմնորոշումը և քվեաթերթիկի համաձայն 100% ձայնի իրավունք ունեցող պարտատեր Աննա Պետրոսյանը կողմ է քվեարկել ժողովի օրակարգում բարձրացված հարցին և ժողովի որոշմամբ որոշվել է ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 կետի հիմքով ձեռնպահ մնալու մասին: Ըստ կառավարիչի, տվյալ դեպքում Ելենա Զորիկի Սարգսյանի սնանկության գործով պարտատեր Սեդա Ծառուկյանը, ամբողջությամբ չի իրացրել իր օրենքով սահմանված իրավունքները, մասնավորապես չի մասնակցել պարտատերերի առաջին ժողովին հետեւաբար զրկվել է իր պահանջի չափով համամասնորեն ձայնի իրավունք ձեռքբերելու իրավունքից: Կառավարիչը իր առարկություններով հայտնել է, որ պարտատեր Սեդա Ծառուկյանը զրկված չէր նաեւ ժողովների որոշումները բողոքարկելու իրավունքից: Կառավարիչը նշել է նաև, որ պարտետեր Սեդա Ծառուկյանը չի իրացրել իր իրավունքները եւ այժմ ընտրել է իրավունքների չարաշահման ճանապարհը: Ելնելով նշվածից՝ կառավարիչը պնդել է, որ սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալյանի կողմից որեւէ իրավունք չի խախտվել եւ կառավարիչը գործել է ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքին համապատասխան: Իր դիրքորոշմանը կից կառավարիչը ներկայացրել է 26.08.2024թ. կառավարիչ նշանակվելու վերաբերյալ որոշում, 28.08.2024թ. պարտատերերի վերջնական ցուցակի հաստատման որոշում, պարտատերերի ժողովի՝ արձանագրությունների, գրանցման թերթիկների և քվեաթերթիկների, ինչպես նաև ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից տրամադրված կադաստրային գործի նյութերի պատճենները:

Կառավարիչը իր բանավոր հայտարարությամբ հայտնեց այն մասին, որ իր կողմից անգործություն նշված գույքի անվավերության վերաբերյալ չի եղել, այլ դեռ ավելին, կառավարիչ դիմում է ներկայացրել կադաստրի կոմիտե և ստացել է ք. Երեւան, Նոր Նորքի 7-րդ միկրոշրջան 49 շենք, 15 բնակարան հասցեի տակ գտնվող գույքի ողջ կադաստրային գործը, որի արդյունքում պարզվել է, որ գույքը մի քանի անգամ վերավաճառվել է, և նույնիսկ այն գրավադրվել է գնորդներից մեկի, այն է՝ Արարատ Բուլղադարյանի կողմից ,,Արարատբանկ,, ԲԲԸ-ում ունեցած պարտավորությունների համար: Իսկ այնուհետև բանկի թույլտվությամբ, վերը նշված բնակարանը, 15.11.2023թ.-ին վաճառվել է մեկ այլ անձի: Իսկ այնուհետև այդ նոր գնորդը, Երևան քաղաքի քաղաքապետի որոշմամբ, գույքը բաժանել է երկու մասի: Կառավարիչը այս ամբողջ նյութերը տեսնելուց հետո հրավիրել է ժողով, որպեսզի պարտատերերը նշված նյութերի հիման վրա հայտնեն իրենց կարծիքները: Սակայն նշված ժողովին դիմումատու Սեդա Ծառուկյանը չի եկել, կարծիք չի հայտնել, իսկ միակ ներկայացած պարտատեր՝ Աննա Պետրոսյանին ներկայացրել եմ գործի մանրամասները, ներկայացրել եմ կատարված ծախսերի հետ կապված հանգամանքները և տարբեր անձանց գույքը վաճառելու հանգամանքները և հասցեի բաժանումը: Պարտատերը տեսնելով գործի դժվարությունը և հետագայում բնականաբար իր հաշվին այդ ծախսերը կատարելու հանգամանքը, կողմ է քվեարկել

ժողովում առաջադրված՝ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 կետի հիմքով ձեռնպահ մնալու հարցին: Նշելով նշված հանգամանքները, կառավարիչը հայտնեց, որ իր կողմից ժողովի վերաբերյալ ծանուցվել է նաև Սեդա Ծառուկյանը, սակայն ժողովին չի ներկայացել և չի իրագործել իր իրավունքը նշված գործի կապակցությամբ: Կառավարիչը հայտնեց, որ վերջինս իրավասու չէ խախտել ժողովի որոշումը:

Թե դիմումատուին, և թե կառավարիչին տրվող հարցերի ժամանակ, հիմնականում նշվեցին այնպիսի հանգամանքներ, որոնք առընչվում էին կառավարիչի կողմից հրավիրված ժողովին, ժողովի ընթացքում քննարկվող հարցերին, որոշմանը, ինչպես նաև այն հանգամանքին, որ իրականում պարտապանի կողմից նախորդ երեք տարվա ընթացքում վաճառված գույքը, վաճառվել է ևս երկու անգամ, այն էլ այն հանդիսացել է որպես գրավի առարկա:

Ինչպես հարց ու պատասխանների, այնպես էլ նիստի քննարկման ժամանակ, կարգապահական հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանը հայտնեց, որ անկախ ցանկացած հանգամանքներից, այս պահի դրությամբ հանձնաժողովը չի կարող գնալ սույն վարույթով կարծիքներ հայտնելու փուլ և չի կարող ավարտել կարգապահական վարույթը, քանի որ ըստ կողմերի տրված փաստաթղթերի և տրված հայտարարությունների, կառավարիչի կողմից հնարավոր խախտումը առաջանում է ս.թ.փետրվարի 28-ին, քանի որ պարտապանի պահանջների վերջնական ցուցակը դատարանի որոշմամբ հաստատվել է 28.08.2024թ.-ին: Այսինքն՝ նման պայմաններում այս պահին քանի դեռ չեն լրացել հնարավոր խախտման ժամկետները, հանձնաժողովը չի կարող ավարտել վարույթը, կամ նույնիսկ անցնել կարծիքների արտահայտմանը:

Նշված հանգամանքից ելնելով էլ, Ա.Սարգսյանը առաջարկեց հանձնաժողովի անդամներին հայտնելու իրենց կարծիքները:

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյանը հայտնեց, որ նիստը պետք է հետաձգել, քանի որ կողմերը նախ միգուցե կարող է գան հաշտության մինչև նշված ժամկետների լրանալը:

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Մովսիսյանը հայտնեց, որ նիստը պետք է հետաձգել, քանի որ անկախ կառավարիչի և բողոք ներկայացնող անձի միջև առկա կլինեն հետագայում համաձայնություններ, դեռևս չեն լրացել կարգապահական հնարավոր խախտման ժամկետները:

Հանձնաժողովի անդամ Լ.Սարգսյանը հայտնեց, որ չնայած նրան, որ այսօրվա անցկացված նիստից, արդեն իսկ կա որոշակի կարծիք գործի վերաբերյալ, սակայն քանի որ հնարավոր խախտման ժամկետները չեն լրացել, ուստի նիստը պետք է հետաձգել:

Հանձնաժողովի անդամ՝ նախագահ Ա.Սարգսյանը հայտնեց այն մասին, որ կարգապահական հանձնաժողովը իր կարծիքը կարող է հայտնել միայն այն դեպքում, երբ կատարվել է կամ չի կատարվել կառավարիչի կողմից կարգապահական խախտում, այն էլ կոնկրետ այն դեպքում, երբ կարգապահական խախտումը առկա է, այն է՝ լրացել է արդեն իսկ հնչեցված ժամկետը, ելնելով վերոգրյալից Ա.Սարգսյանը նույնպես հայտնեց կարծիք, որ նիստը պետք է հետաձգել:

Հաշվի առնելով նշված հանգամանքները, հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և այն նշանակել ոչ շուտ, քան 28.02.2025թ.:

Այնուհետև հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանի կողմից, 18.03.2025թ.-ին նշանակվել է նիստ, որին ներկայացել էին Հարություն Գևորգյանը և Լուսինե Սարգսյանը, ինչպես նաև սնանկության գործով կառավարիչ՝ Բաբկեն Եկմալյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քվորումն ապահովված էր, հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը նիստը համարեց բացված: Ա.Սարգսյանը հայտնեց, որ նիստին չէր ներկայացել դիմումատու՝ Սեդա Ծառուկյանը, սակայն վերջինիս կողմից դիմում է ներկայացվել ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ դիտորդ խորհուրդի նախագահ՝ Տիգրան Սարգսյանի անվամբ, որով դիմումատուն նշել է, որ իր

կողմից դիմումում նշված դիրքորոշումները անփոփոխ են, քանի որ կառավարիչի կողմից մինչ օրս իր նախորդ դիմումով նշված գործողությունները, որոնք կառավարիչը ըստ էության պետք է կատարեր, սակայն այն չի կատարվել և վերջինս նման բողոքներ ներկայացնելու է նաև բազմաթիվ այլ մարմիններին:
Այնուհետև հանձնաժողովի անդամները հայտնեցին իրենց կարծիքները, որով ըստ էության հայտնեցին որ, դիմումը արդեն իսկ քննվել է նախորդ նիստի ժամանակ, իսկ դիմումատուի կողմից առկա է դիմում, որով նա պնդել է իր դիմումը, ուստի նշանակված նիստը կարող է անցկացվել դիմումատու՝ Սեդա Ծառուկյանի բացակայությամբ:
Այնուհետև Ա.Սարգսյանը կառավարիչ Բաբկեն Եկմալյանից հետաքրքրվեց, թե արդյոք վերջինս պնդում է իր կողմից ներկայացված առարկությունները, թե ոչ, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց, որ այո պնդում է և նա չպետք է ներկայացներ հայցադիմում:
Այնուհետև հանձնաժողովը գտավ, որ առկա նյութերը և տրված հայտարարությունները բավարար են, որպեսզի սույն կարգապահական վարույթը ավարտվի և հանձնաժողովը գնա կարծիքների արտահայտմանը:
Հանձնաժողովի անդամները, արդեն իսկ առանց կառավարիչի ներկայությամբ հնչեցրեցին իրենց կարծիքները, այն է՝.
Հարություն Գևորգյանը հայտնեց, որ կառավարիչը օգտվել է ժողովի որոշումից և հիմք ընդունելով այդ որոշման պահանջները, հայցադիմում գույքի նվիրատվությունը անվավեր ճանաչելու մասով չի ներկայացրել, որի գործողություններում նա խախտում չի տեսնում և գտնում է, որ վարույթը պետք է կարճել:
Լուսինե Սարգսյանը հայտնեց, որ նա նույնպես կառավարիչի գործողություններում խախտում չի տեսնում, քանի որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի հիմքով առկա է պարտատերերի ժողովի որոշում, որի հիմքով կառավարիչը կարող էր անվավերության հայցադիմում չներկայացնել ելնելով նշվածից էլ գտնում է, որ վարույթը ենթակա է կարճման:
Արման Սարգսյանը հայտնեց կարծիք, որ նա նույնպես համակարծիքի է հանձնաժողովի մյուս անդամների հետ, քանի որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն կառավարիչը կարող է դիմել դատարան, եթե առկա չէ կոնկրետ պահանջով դատարան դիմելուց ձեռնպահ մնալու մասին պարտատերերի ժողովի որոշումը: Իսկ Բաբկեն Եկմալյանի կողմից նման ժողով հրավիրվել է, որում պարտատերերը կայացրել են որոշում, դատարան դիմելուց ձեռնպահ մնալու մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախ հարկ է նշել, որ կարգապահական հանձնաժողովը պետք է ուսումնասիրի միայն ու միայն դիմումում նշված հանգամանքները, պարզի այդ դիմումում ընկած հանգամանքների հիմնավորվածությունը, ինչպես փաստաթղթային, այնպես էլ օրենսդրական և առկա իրավական ակտերի շրջանակներում:

Հանձնաժողովը իր լսումների ընթացքում չի կարող անդրադառնալ այնպիսի հանգամանքների, որոնք կազմված են միայն լոկ ենթադրությունների հիման վրա, գրավոր դիմումի, որում արտացոլված են անձնական բնույթի հարցեր պարունակող հայտարարություններ, ինչպես նաև այնպիսի հարցերի և հանգամանքների, որոնք ենթակա են քննման, կոնկրետ դեպքում՝ քննչական կամ այլ համապատասխան մարմինների կողմից:

Հանձնաժողովը անդրադառնալով դիմումում նշված հանգամանքներին, անդրադարձել է միայն այն պարզ հարցերին, որոնք մասնավորապես վերաբերելի են միայն կառավարիչի կողմից, ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված իրեն վերապահված գործողությունների կատարմանը, կամ այն չկատարելու դեպքում, գործողությունների չկատարման հիմքում ընկած հանգամանքներին:

Այսպես՝ սույն վարույթի քննության, ինչպես նաև հանձնաժողովին տրամադրված փաստաթղթերով հայտնի դարձավ, որ սնանկության գործով կառավարիչ՝ Բաբկեն Եկմալյանը, թիվ ՍՆԴ/1263/04/24 սնանկության վարույթի ընթացքում, իր գործողությունների իրականացման ժամանակ, ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի պահանջների կատարման նպատակով, հարցում է կատարել ՀՀ կադաստրի կոմիտե և ստացել պարտապանի գույքերի նախորդ 5 տարվա ընթացքում կատարված իրացումներին վերաբերվող բոլոր փաստաթղթերը: Նշված փաստաթղթերի ուսումնասիրությունից, կառավարիչը պարզել է, որ ք. Երեւան, Նոր Նորքի 7-րդ միկրոշրջան 49 շենք, 15 բնակարանը մի քանի անգամ վերավաճառվել է և նույնիսկ այն գրավադրվել է գնորդներից մեկի, այն է՝ կողմից ,,Արարատբանկ,, ԲԲԸ-ում: Իսկ այնուհետև բանկի թույլտվությամբ, վերը նշված բնակարանը, 15.11.2023թ.-ին վաճառվել է մեկ այլ անձի: Իսկ այնուհետև այդ նոր գնորդը, Երևան քաղաքի քաղաքապետի որոշմամբ, գույքը բաժանել է երկու մասի:

Նշված հարցը քննարկելու նպատակով, կառավարիչը 08.11.2024թ., հրավիրել է պարտատերերի ժողով, որի մասին կառավարիչը ծանուցել է բոլոր պարտատերերին, այդ թվում նաև պարտատեր և սույն գործով դիմումատու՝ Սեդա Ծառուկյանին: Նշված ժողովին, չնայած այն հանգամանքին, որ Ս.Ծառուկյանը նույնպես ծանուցված է եղել, սակայն ներկայացել է միայն պարտատեր՝ Աննա Պետրոսյանը, որը բնականաբար ձեռք է բերելով 100% ձայնի իրավունք: Հայտնել է, որ պարտատերերի առաջին ժողովին պարտատեր Սեդա Ծառուկյանը չի մասնակցել: Ժողովի օրակարգում եղել է ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 կետի հիմքով դատարան դիմելուց ձեռնպահ մնալու մասին հարցը, որին կառավարիչը հայտնել է, որ նշված ժողովին մասնակցել է բացառապես 100% ձայնի իրավունք ունեցող պարտատեր Աննա Պետրոսյանը, քանի որ առաջին ժողովին մասնակցել է միայն այդ պարտատերը: Ժողովի ընթացքում կառավարիչը պարզաբանել է ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 կետի կարգավորումը, բացատրել է առանձնահատկությունները եւ հետեւանքները: Կառավարիչը այդ ժողովի ընթացքում ներկայացրել է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված նյութերը, իսկ այնուհետև 100% ձայնի իրավունք ունեցող պարտատեր Աննա Պետրոսյանը կողմ է քվեարկել ժողովի օրակարգում բարձրացված հարցին և ժողովի որոշմամբ որոշվել է ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1.1 կետի հիմքով ձեռնպահ մնալու մասին: Նշված որոշման հիման վրա էլ կառավրիչի կողմից գործողություններ չեն իրականացվել օրենքի 54-րդ հոդվածի հիմքով, նվիրատվության անվավերության հայցադիմում ներկայացնելու մասին:

Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ կառավարիչի կողմից առկա չեն այնպիսի գործողություններ, որոնք ենթակա են կարգապահական տույժի կիրառման, քանի որ կառավարիչի կողմից իրականացվել են ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված բոլոր

գործողությունները, այն է՝ պարզելու նախորդ 5 տարվա ընթացքում կատարված գործարքների մասին: Այսինքն՝ եթե կառավարիչը ունենար կողմնապահություն պարտապանի նկատմամբ, ուստի նա կթաքցներ այդ՝ նախորդ 5 տարիների ընթացքում կատարված գործարքը և դրա վերաբերյալ չէր հրավիրի պարտատերերի ժողով: Այսինքն՝ կառավարիչը գործել է թափանցիկ տալով հնարավորություն պարտատերերին իր կողմից ձեռք բերված փաստաթղթերին ծանոթանալու և կարծիք հայտնելու համար:

Այնուհետև կառավարիչը հրավիրել է ժողով, որում քննարկվել է նույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված՝ 1.1 մասով սահմանված նորմերը և ժողովը որոշել է հայցադիմումից ձեռնպահ մնալու մասին:

Միաժամանակ հանձնաժողովը արձանագրում է, որ դիմումատու Սեդա Ծառուկյանը զրկված չի եղել իրականացնելու իր իրավունքները, առավել ևս, որ վերջինս հանդիսանում է որպես փաստաբան և բնականաբար կարող էր ծանոթ լինել իր իրավունքների իրականացման մասին, մասնավորապես՝ կառավարիչի կողմից հրավիրվել են ժողովներ, որին պարտատեր և դիմումատու՝ Սեդա Ծառուկյանը չի մասնակցել, չի իրագործել իրեն տրված հնարավորությունները, և եթե նույնիսկ ժողովի ընթացքում կայացվել են ըստ իրեն անօրինական որոշումները, ապա ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի հիմքով, չի բողոքարկել ժողովի կողմից կայացված որոշումը:

Նման պայմաններում, քանի որ առկա է եղել ժողովի որոշում, ապա կառավարիչը չէր էլ կարող ներկայացնել նման հայցադիմում:

Հիմք ընդունելով սույն եզրակացության մեջ նշված հանգամանքները և ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ բացակայում են կարգապահական խախտման հիմքերը և հատկանիշները, ինչպես նաև այն փաստը, որ կառավարչի կողմից առկա չէ այնպիսի գործողություն, որը կարող է բերել վերջինիս նկատմամբ կարգապահական տույժի կիրառմանը, ինչով պայմանավորված կառավարիչ՝ Բաբկեն Եկմալյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կից ներկայացվում է կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը՝ 41 թերթից, ինչպես նաև նիստի ձայնագրության կրիչը:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան